

ԳԱՎԻՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՄԻ ԵԶԱԿԻ ՄԱԳԱՂԱԹՅԱ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԶԵՌ. ՀՄՐ 10665)

Բանալի բառեր՝ Բարսեղ և Հակոբ Մերաստացիներ, Մերաստացիների տպարան, տպագիր Ավետարան, տպագրություն մագաղաթի վրա, Կոստանդնուպոլիս, ծաղկարար եղբայրներ, գունավորված տպագիր Ավետարան:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում իրենց մնացուն տեղն են գտել նաև մի շարք տպագիր օրինակներ, որոնք հիմնականում ձեռագրերի մաս են կազմում, ինչպես նաև օգտագործված են կամ որպես պատահիկ-պահպանակ, կամ կազմաստառ¹: Այս տպագրերի շարքում կան նաև եզակի պահպանված օրինակներ:

Մատենադարանի ձեռագրատանը պահվող հնատիպերի շարքում առանձնանում է 10665 համարի Ավետարանը, որն այն բացառիկ միավորներից է, որն ամբողջությամբ տպագիր է, բացառությամբ հետագա ստացողի հիշատակարանից՝ գրված 1809 թվականին, 87բ էջին՝ Մարկոսի Ավետարանի վերջում առկա ազատ տեղում², և նկարազարդումներից՝ բացառությամբ 88ա էջի վերջազար-

¹ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում տեղ գտած ավելի քան 200 տպագիր նյութերի ցանկը տես՝ *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, սյուն. 1412, *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Յանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, սյուն. 1214, *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի*, հ. Գ., կազմ.՝ Ա. Մախասեան, Երևան 2007, սյուն. 356:

² «Յիշատակ է չհնադատիպ Սուրբ Աւետարանս հիւանդանոցիս եւ ի սմին կառուցեալ Սուրբ Յօհաննէս Աստուածաբան անտարանիչ անուն հրաշափայլ սուրբ եկեղեցոյս աստուածագօր նազրբ գերյարգելի եւ ազնուազարմ խափամանի լուսահոգի մահտեսի Տափեսի որդի Յօհաննէս աղային. ի 1809 ամի Փրկչին եւ ի յուն/արի սկզբանն:

Արդ. խնորհ նա ինքն ի մաքրամիտ հարանցդ արբոց զսոյն ընթերցմամբ վայելողաց յիշել ի յընդունական ձեռ աղօթս՝ կենդանի եւ հանգուցեալ արեւակցօքն իւրով հանդերձ, զի եւ

դի: Ավետարանն ունի նաև մեկ այլ առանձնահատկություն. տպագրված է մագաղաթի վրա: Մագաղաթի վրա մեզ հայտնի տպագիր թերևս մեկ օրինակը պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրական հավաքածուում՝ 3621 համարի ներքո³, որը 1666-1668 թթ. Ոսկանյան տպարանի Աստվածաշնչի ևս եզակի օրինակ է⁴:

Ավետարանը Մատենադարան է մուտք գործել 1974 թվականին⁵ և ներմուծվել հայերեն ձեռագրերի հիմնական հավաքածուի մեջ՝ էլնելով Ավետարանի գեղարվեստական հարդարանքից, որն ամբողջությամբ ձեռքով է արված, բացառությամբ 88ա թերթի բուսական վերջագարդի, և ոճական առումով հարուստ է Կ. Պոլսի մանրանկարչական դպրոցին: Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի երրորդ հատորում այն թվագրված է XVIII դարով և ունի հետևյալ ծանոթագրությունը. «Նկարագրողումներն արուած են ձեռքով: Հմմտ. Հայ հնատիպ գիրքը, հմր 934 Պոլիս, տպարան Մատթէոս դպրի, 1796 թ., ՄՄ հնատիպ Հ^{մր} 959»⁶:

Տարիներ առաջ առիթ ենք ունեցել անդրադառնալու այս Ավետարանին. փորձել ենք ճշտել տպագրության թվականը և տպարանը, սակայն հստակեցնել չի հաջողվել, և հանգել ենք հետևյալին. «Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի յաւելուածային Գ. մասում (Երեւան, 2007, սիւն 154) համարուած է, թէ ձեռքով գունաւորուած այս տպագիրն է՝ «Հայ հնատիպ գիրքը, Հ^{մր} 934 Պոլիս, տպարան Մատթէոս դպրի, 1796 թ., ՄՄ հնատիպ Հ^{մր} 959», սակայն սա լիովին սխալ է, որովհետև զատորոշիչ հիմնական հատկանիշներով սրանք տարբեր հրատարակություններ են. այսպես՝ Հ^{մր} 10665ը 188 թերթ է (376 էջ), արտաքին չափսը՝ 20×14,5 սմ, գրադաշտը՝ 13,5×10,2. մինչ Հ^{մր} 934 հնատիպը 182 թերթ է (364 էջ), արտաքին չափսը՝ 25,7×18,2, գրադաշտը՝ 17,7×11,7 է և և զարգափակ շրջանակի մեջ (որ նախորդը չունի): 10665ն ավելի մերձ է Հ^{մր} 253 հնատիպին՝ «Աւետարան, Կ. Պոլիս, տպ. Էտիկար Գնդեւանցու, 1710»՝ 479 երկայուն էջ, գրադաշտը՝ 13×11 սմ (այս երկու տպագիրների մասին տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թուականներին», Երեւան, 1988, էջ 185 և 717-8), սակայն սրա հետ

յիշողդ դ յիշեալ լինիջիք ի Տեառնէ Յիսուսէ, աստ եւ ի հանդերձելումն եւ երանաւէտ տեսութեան նորա արժանասիք. ամէն»:

³ Մայր Յուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Նորայր արքեպիսկոպոս Պողոսեանը, հ. 11, Երուսաղեմ, 1991, էջ 37-38:

⁴ Այս մասին տեղեկացել ենք Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանից, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը:

⁵ Նվեր է ստացվել Շնորհի արհեստիսկոպոս Գալուստեանից (Կ. Պոլիս). տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ. ... սյուն. 17-18, 31-32:

⁶ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, սյուն. 154:

էլ լիովին չի նոյնանում, այսինքն՝ ամենայն հաւանականութեամբ գրականութեան մէջ շարձանգրուած հրատարակութիւն է, որի քննութեանն անդրադառնալու ենք առանձին: Այսպիսով, մեր Հ^ր 10665ի տպագրութեան, ուստի՝ նաեւ գունագարդման ժամանակը 1710 թ. շուրջ է»⁷:

Չնայած արված եզրահանգմանը, որն ինչպէս պարզվեց հետագայում, մասամբ սխալ էր, տարբեր առիթներով մատչանին առնչվելիս թե՛ Գևորգ Տեր-Վարդանյանի, թե՛ ինձ մոտ կրկին ու կրկին հարց էր առաջանում՝ արդյո՞ք կկարողանանք ճշտել տպագրատունը և տպագրման թվականը, մանավանդ, որ խոստացել էինք՝ հնատիպ գրքի «քննութեանն անդրադառնալու ենք առանձին»: Նման մի առիթի ժամանակ, հետևելով Գևորգ Տեր-Վարդանյանի ցուցումին, նորից սկսեցի փնտրտուքս, ինչն այս անգամ պսակվեց անսպասելի հաջողությամբ: Մանրագնին ուսումնասիրելով մատչանը՝ արձանագրեցի մի շարք առանձնահատկություններ, ինչպէս օրինակ՝ նյութերը, գրադաշտի չափերը, տողերի քանակը, տառատեսակի չափը և այլն: Այս տվյալները պետք է օժանդակեին տպագրի որոնմանը Հայ հնատիպ գրքի մատենագիտության մեջ, որն ավելի հեշտ պետք է լիներ, քանի որ արդեն նախապես ճշտել էինք մոտավոր ժամանակաշրջանը և վայրը: Այս տվյալներին զուգահեռ արձանագրեցի մի քանի տպագրական վրիպակ, որոնք առկա էին մասնավորապես գրքի էջահամարների մեջ: Եվ զարմանալիորեն հենց այս վրիպակներն օգնեցին բացահայտելու տպագրի ինքնությունը, քանի որ նույն վրիպակներն արձանագրված էին նաև Հայ հնատիպ գրքի մատենագիտությունում. «էջակալությունը գրքում տեղ-տեղ խախտված է, օրինակ՝ 61-64 էջահամարները կրկնված են, 63-ի փոխարեն տպագրված է 36, 109-ի փոխարեն՝ 901, և 153-ի փոխարեն՝ 152, 170-ի փոխարեն՝ 17 և 209-ի փոխարեն՝ 29-ը»⁸:

Արդյունքում պարզեցինք, որ ՄՄ 10655 համարի ներքո գրանցվանաձայն մագաղաթյա Ավետարանը 1740 թվականին լույս է տեսել Պոլսում՝ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանում: Խնդիրն այն է, որ այս Ավետարանի մնացյալ թղթյա օրինակները, որոնք հասել են մեզ և արձանագրված են⁹, բոլորն էլ ունեն գարգափակ էջեր, ինչը թե՛ մեզ, թե՛ մյուս հետազոտողներին գցել է շփոթություն մեջ:

⁷ Ավետարանին անդրադարձել ենք XVIII-XIX դարերի Հայ մանրանկարիչների մատենագիտությունը կազմելու առիթով: Սույն աշխատությունը դեռևս անտիպ է. Հայ մանրանկարչության մատենագիտություն, հ. Գ., ԺԼ-ԺԹ. դարերի անանուն մանրանկարիչներ, յաւելումներ (Ըստ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի), կազմ.՝ Ա. Գեորգեան, Գ. Ղազարեան, խմբագրութեամբ եւ առաջաբանով՝ Գեորգ Տեր-Վարդանեանի, էջ 218-219:

⁸ Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 365 (այսուհետև՝ Հայ գիրքը 1512-1800 թթ.):

⁹ Հայ գիրքը 1512-1800 թթ., էջ 364-365:

Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների տպարանից¹⁰ եղբայրների օրոք՝ 1735-1740 թվականների ընթացքում, Կ. Պոլսում լույս է տեսել վեց գիրք¹¹.

1. Մինաս Համդեցի, Ազգաբանութիւն թագաւորացն Հայոց, 1735 թ.
2. Խրատ հոգեկան (Թարգմ.՝ Հակոբ Դպրի), 1736 թ.
3. Խրատ հոգեկան (հայատառ թուրքերեն), 1736 թ.
4. Ներսէս Կամբրոնացի, Տեսութիւն աղօթից, 1736 թ.
5. Շարակնոց, 1736 թ.
6. Աւետարան, 1740 թ.:

ՄՄ 10665 Ավետարանն ունի վարդագույն թավշյա կազմ՝ ստվարաթղթե միջուկով, որի փեղկերը զարդարում են արծաթյա բարձրաքանդակներ. «շինծու» բուսական շրջանակների կենտրոններում ձվածիր շրջանակներում պատկերված են Գաբրիել հրեշտակապետը (Ա. փեղկ) և Մարիամ Աստվածածինը (Բ. փեղկ): Երկու կազմերի կենտրոնական բարձրաքանդակները միասին պատկերում են Ավետման տեսարանը: Բուսական շրջանակների ներքին անկյունները զարդարում են մեկական հրեշտակ:

Ավետարանը զարդարում են չորս ավետարանիչների մանրանկարները (Մաթեոս՝ 1բ, Մարկոս՝ 54բ, Լուկաս՝ 91ա, Հովհաննես՝ 147բ), իրենց կիսախորան-անվանաթերթերով (2ա, 55ա, 91ա, 148ա) և լուսանցազարդեր, որոնք 88 գեղեցիկ ծաղիկներ են՝ վարդ, մեխակ, մանուշակ, հովտաշուշան, զանգակ և այլն¹², ծառին նստած թռչուն (4ա), բուսական (62ա, 93ա, 187բ) և երեք ծաղիկ բռնած ձեռք (182բ), ու զարդագրեր, որոնց հիմնական մասը թռչնագրեր են (109 հատ)¹³, և մեկական բուսական (4բ) ու կենդանագիր (40բ) զարդագիր:

¹⁰ Սեբաստացիների տպարանի գործունեությանն անդրադարձել են մի շարք հեղինակներ, որոնք զբաղվել են հայ տպագիր գրքի պատմությամբ. տե՛ս Թեոդիկ, *Տիպ ու տառ*, Կ. Պոլիս, 1912 թ., էջ 60, Գ. Առնյան, *Հայ գիրքը և տպագրության արվեստը. պատմական տեսություն սկզբից մինչև XX դար*, Երևան, 1946, էջ 39, 145, Ք Կորկոտյան, *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.)*, Երևան, 1964, էջ 70-72, Ռ. Իշխանյան, *Հայ գիրքը 1512-1920*, Երևան, 1981, էջ 79, և այլն:

¹¹ Հրատարակությունների մանրամասն նկարագրությունը տե՛ս *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 331, 336-338, 364-365 (չ^{տր} 423, 429-432, 455):

¹² Թբ. 3ա, 4բ, 5բ, 6բ, 7ա, 9ա, 10աբ, 12բ, 13բ, 14աբ, 15ա, 16ա, 17ա, 18աբ, 19բ, 20ա, 21ա, 22աբ, 23բ (2 հատ), 24աբ, 25բ, 26աբ, 28ա, 29ա, 29բ, 30ա, 31բ, 32բ, 33աբ, 37աբ, 39ա, 40բ, 41բ, 43ա, 45աբ, 46ա, 47բ, 48բ, 51աբ, 52ա, 56աբ, 57ա, 58աբ, 59աբ, 60աբ, 61ա, 63աբ, 64աբ, 65աբ, 66բ, 67ա, 81ա, 82բ, 84բ, 86ա, 87ա, 173աբ, 174ա, 175ա, 176բ, 178բ, 181ա, 183ա, 184ա, 185աբ, 186աբ, 187ա:

¹³ Թբ. 1ա, 3ա (2 հատ), 4ա, 5բ, 6աբ, 7ա, 9ա, 10աբ, 12բ, 13բ, 14աբ, 15ա, 16ա, 17ա, 18աբ, 19բ, 20ա, 21ա, 22աբ, 23բ (2 հատ), 24աբ, 25բ, 26աբ, 27բ, 29աբ, 30ա, 31բ, 32բ, 33բ, 34բ, 35բ, 36բ, 37աբ, 39ա, 41բ, 43ա, 45աբ, 47բ, 48բ, 51ա (2 հատ), 51բ, 52ա, 56ա (2 հատ), 56բ, 57ա, 58աբ, 59ա, 59բ (2 հատ), 60ա (2 հատ), 60բ, 61աբ, 62ա, 63աբ, 64աբ, 65աբ, 66բ, 67աբ, 68բ (2 հատ), 69ա, 71ա, 72ա, 73աբ, 74աբ, 75ա, 76ա, 77ա, 78ա, 79աբ, 81ա, 82բ,

Ձեռքով են լրացված նաև Ավետարանների խորագրերը և սկզբնատողերը, որոնք մնացած տպագիր օրինակներում արված են առանձին կաղապարներով (կլիշեներով)։

2ա «ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ | ԳԼ. Ա. | ԳԻՐՔ ԾՆՆԴԵԱՆ | ՅԻՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐՂՈՅ ԴԱԼԹԻ ՈՐՂՈՅ»¹⁴։

55ա «ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ | ԳԼ. Ա. | ՍԿԻՉԲՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՅԻՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐՂՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ»¹⁵։

91ա «ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ | ԳԼ. Ա. | ՔԱՆՉԻ ԲԱՉՈՒՄՔ | յօժարեցին վերստին կարգելը»¹⁶։

148ա «ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ | ԳԼ. Ա. | Ի ՍԿՉԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ ԵՒ ԲԱՆՆ»¹⁷։

ՄՄ 10665 Ավետարանի բովանդակությունն է.

ա. 1ա երգ առ անձկալի եւ փափագելին Յիսուս – Յիսուս փափագելին նախահարց խըմբից... եւ ըզսէր աշխարհիս ի բաց ընկեցէք։

բ. 2ա-52ա Աւետարան ըստ Մատթէոսի։

գ. 52բ նախադրութիւն կարճառօտ Սրբոյ Աւետարանին Մարկոսի, 53աբ Յանկ գլխոց Սրբոյ Աւետարանին Մարկոսի, 55ա-87բ Աւետարան ըստ Մարկոսի։

դ. 88ա նախադրութիւն կարճառօտ Սրբոյ Աւետարանին Ղուկասու, 88բ-90ա Յանկ գլխոց Սրբոյ Աւետարանին Ղուկասու, 91ա-145ա Աւետարան ըստ Ղուկասու։

ե. 145բ նախադրութիւն կարճառօտ Սրբոյ Աւետարանին Յօհաննու, 146աբ Յանկ գլխոց Սրբոյ Աւետարանին Յօհաննու, 148ա-188ա Աւետարան ըստ Յովհաննու։

զ. 188բ Այլ ծանուցումն յանկօրէն յաղագս գլխաւոր բանից շորեցունց աւետարանչացն – Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յօհաննէս Չ. կերպ տեղի համաձայնին միմեանց... առանձնախօսին իւրաքանչիւրքն։

84բ, 86ա, 87ա, 92բ, 93ա, 94բ (2 հատ), 95բ (2 հատ), 96աբ, 99ա, 100աբ, 101բ (2 հատ), 102բ, 103աբ, 105բ, 106ա, 107ա, 108ա, 109ա, 111ա, 112աբ, 113բ, 114ա, 115ա, 116աբ, 117բ, 119բ, 120ա, 121ա, 122աբ, 123բ, 124բ, 126բ, 128ա, 129աբ, 130բ, 131բ, 133բ, 134ա (2 հատ), 135ա, 136ա, 137բ, 138աբ, 140ա, 142բ, 143աբ, 144բ (2 հատ), 149ա, 149բ (2 հատ), 150աբ, 151աբ, 152աբ, 153ա, 154բ, 155աբ, 156բ, 157ա, 158աբ, 159աբ, 161աբ, 162աբ, 163բ, 164աբ, 166ա, 167բ, 168աբ, 169ա, 171աբ, 172աբ, 173աբ, 174ա, 175աբ, 176բ, 177ա, 178բ, 181ա, 182բ, 183ա, 184ա, 185աբ, 186աբ, 187աբ։

¹⁴ Հմմտ. տպագիր, էջ 19։

¹⁵ Հմմտ. տպագիր, էջ 121։

¹⁶ Հմմտ. տպագիր, էջ 193։

¹⁷ Հմմտ. տպագիր, էջ 148։

է. 188թ Յանկա այս բաղդատի ըստ լուսանցի եղեալ թվոցն գլխաւոր բանից – Աւետարանք բժշկութեան ըստ Մատթէոսի. ԿԳ. Այլ իբրեւ էջ ի լեռ: վրջ.՝ եւ գցաւ մեր եբր՛: ... ԽԱ. եւ եղեւ ի շաբաթու: Վրջ՝ առնիցեն Յիսուսի:///
 Ի տարբերություն Սեբաստացիների 1740 թվականի թղթյա Ավետարանների՝ ՄՄ Հ^մ 10665 օրինակում պակասում են առաջին մամուլը և վերջին՝ ԻՆ. մամուլից հետո գտնվող 1 թերթը, որի առաջին երեսին «Յանկա այս բաղդատի ըստ լուսանցի եղեալ թվոցն գլխաւոր բանից» նյութի վերջն է, իսկ երկրորդ երեսին հիշատակարանն է՝ «Յիշատակարան նոր տպեցման սուրբ Աւետարանիս»¹⁸: Պակասող Առաջին մամուլը պարունակում է տիտղոսաթերթը (էջ 1)՝ «Սուրբ Աւետարան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ըստ չորից աւետարանչացն սրբոց Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յօհաննու», 10 խորանները՝ Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին (էջ 2-3) և Համաբարբառը (էջ 4-11), «Խրատ վասն զանազանից թուոց սրբոյ Աւետարանիս պարզապես շարադրեցեալ» (էջ 12), «Նախադրութիւն կարճաօտ Սրբոյ Աւետարանիս Մատթէոսի» (էջ 13) և «Յանկ գլխաւոր բանից Սրբոյ Աւետարանին Մատթէոսի» (էջ 14-16):

Հաշվի առնելով, որ ձեռագրի կազմը ներկայումս անջատ է հիմքից, և սկզբում ու վերջում որոշակի ազատ տեղ կա, ինչպես նաև ելնելով Ավետարանի նկարագարդման սկզբունքներից՝ առաջին մամուլը ևս եղել է, և այն էլ կիսով չափ ձեռագիր, որը, ինչպես և վերջին թերթը, տասնամյակների ընթացքում կորսվել է: Հավանական է, որ դրանք արդեն իսկ կորած են եղել 1809 թվականին, երբ մատյանի «միակ ազատ» մասում գրվել է հետագա ստացողի՝ մահտեսի Տաքեսի որդի Յօհաննէսի հիշատակարանը: Կարելի է ենթադրել, որ վերջում այն ունեցել է թերթ կամ թերթեր՝ նախատեսված հիշատակարանի համար, ինչը տիպական է հայ ձեռագրական մշակույթին: Հուսանք, որ մի օր մեր ենթադրությունները կհաստատվեն, և ենթադրվող հիշատակարանը նոր լույս կսփռի այս ինքնատիպ տպագրի ստեղծման հանգամանքներին:

Հաջորդ խնդիրը, որի լուծումը ևս պետք է փորձեինք պարզաբանել, Ավետարանի գեղարվեստական հարդարանքի հարցն էր. արդյո՞ք այս մագաղաթե Ավետարանը նկարագարդվել է Բարսեղի և Հակոբի ձեռքով: Եղբայրների նկարիչ լինելու մասին տեղեկանում ենք վերջիններիս տպարանում լույս տեսած Շարակնոցի հիշատակարանից. «...Ի նորակազմ տպարանի անարժան Սեբաստացի ծաղկարար երկու եղբարցս՝ տիրացու Բարսեղի եւ տիրացու Յակօբի...»¹⁹: Եղբայրների ծաղկարարներ լինելու մասին վկայում են նաև նրանց գործունեությունը անդրադարձած՝ վերը մեր նշած հեղինակները:

¹⁸ Հայ գիրքը 1512-1800 թթ., էջ 365:

¹⁹ Նույն տեղում, էջ 337-338:

Այս հարցի պարզաբանման համար մանրակրկիտ ուսումնասիրեցինք Սեբաստացիների տպարանում լույս տեսած 1740 թվականի Ավետարանի մի քանի օրինակներ, ինչի արդյունքում նաև պարզեցինք, որ տպագիր Ավետարանի նկարագրողումներում առկա է երկու տարբերություն.

1. Ավետարանի 185-րդ էջի լուսանցազարդը, որը պատկերում է Քրիստոսի հարույնությունը, գլխիվայր է տպագրված ՄՄ հնատիպ 947 և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հնատիպ 702 օրինակներում:

2. Ավետարանի 209-րդ էջի լուսանցազարդը ՄՄ հնատիպ 947 օրինակում պատկերում է Քրիստոսին և Սատանային (Փորձություն), իսկ ՄՄ հնատիպ 1975 և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հնատիպ 702 օրինակներում նույն էջում բուսական լուսանցազարդ է:

Պարզեցինք, որ մագաղաթյա Ավետարանի նկարագրողումներից մասնավորապես զարդագրերը ունեն որոշակի նմանություններ Սեբաստացիների տպարանում լույս տեսած նույն թվականի Ավետարանի զարդագրերի հետ:

Ապա մեր ուշադրությունը գրավեց ՄՄ 101 ձեռագիր ժողովածուն²⁰, որը 1740 թվականին Կոստանդնուպոլսում նկարագրողել են Բարսեղ և Հակոբ եղբայրները²¹, որոնք նաև կազմել են ձեռագիրը: Ձեռագրի 216ա էջին՝ պատվիրատու Յովհաննէս արքեպիսկոպոս Գողթնեցու հիշատակարանի վերջում, հիշատակված են եղբայրները. «...Ծաղկեցաւ եւ կազմեցաւ գիրքս երկուց հարազատից եղբարցն Բարսղի եւ Յակոբայ»²²:

466 թերթից բաղկացած ժողովածուն շունի էջով մեկ արված մանրանկարներ, սակայն մատյանում տեղ գտած բնագրերը զարդարում են 19 լուսանցային մանրանկար²³, մեկական կիսախորան (301ա), կիսախորան-գլխազարդ (273ա) և ճակատազարդ (1գ), 6 ծաղիկ՝ արված որպես լուսանցազարդ (307բ, 308ա, 308բ (3 հատ), 310բ) և 294 զարդագրեր. այդ թվում՝ թռչնագրերը (256), հանդուցագրեր (10) և բուսական զարդագրեր (28): Զարդագրերում տեղ են գտել

²⁰ Ձեռագիրը գրվել է 6 տարբեր գրիչների ձեռքով, որոնցից երկուսի անունն է հայտնի (Աբրահամ դալիր, Յակոբ դալիր), Կոստանդնուպոլսում և եվրոպիայում Յովհաննէս արքեպիսկոպոս Գողթնեցու պատվերով. Տե՛ս Յուզյակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., սյուն. 249, Մայր Յուզյակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, իւմբ.՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Երևան, 1984, սյուն. 419-430:

²¹ Ա. Գլուզեան, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտութիւն IX-XIX դդ., Գանիթ, 1998, էջ 96, 485:

²² Մայր Յուզյակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., սյուն. 428:

²³ Հոբ՝ ք. 301բ, Թագ՝ 301բ, 302ա, Հեսու՝ որդի Սիրաբի՝ 302բ, Եսայի մարգարէի փակոճումը՝ 303բ, Սայլ՝ 303բ, Գուբ և աղյուծ՝ 304բ, Հրեշտակ՝ 304բ, Աստծո աջը և Ավետարան՝ 305ա, Եզ (Ղուկաս ավետարանի խորհրդանիշը)՝ 306ա, Արծիվ (Հովհաննէս ավետարանի խորհրդանիշը)՝ 306բ, Պողոս առաքյալի աջը՝ սուրբ բռնած՝ 307ա, Մատենան՝ 309ա, Տախար՝ 309ա, Պետրոս առաքյալի աջը՝ բանալին բռնած՝ 310ա, Հարուցեալ Հիսուսը սկիհի մեջ՝ 311բ:

Մաշտոցյան այբուբենի 30 տառերի (բացակայում են ժե, Չա, Ղատ, Չա, Ռա և Յո տառերը) տարատեսակ օրինակներ, ինչպես նաև Յ տառի մեկ ձևավորում (89ա): Հայոց այբուբենի տառատեսակների նման բազմազանություն (նկատի ունենք տառատեսակների օգտագործումը) մեկ ձեռագրի նկարագրողման հարդարանքում հաճախ չի հադիպում: Ձեռագրի գունապնակում տեղ են գտել կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագույն, փիրուզ և սև գույներն՝ իրենց երանգներով: Այս նկարագրողումներից 301բ-402բ էջերին տեղ գտած մանրանկարներն արված են գծանկարային ոճով կարմրով, բացառությամբ Հոբի մանրանկարի, որում օգտագործված է նաև սևը:

Ավետարանի (ՄՄ Հ^ր 10665) և Ժողովածուի (ՄՄ Հ^ր 101) մանրանկարների զուգադիր համեմատությունը մեզ թույլ է տալիս համոզված ասել, որ երկու ձեռագրերը նկարագրողված են միևնույն ձեռքով: Ոճական նմանությունից բացի համընկնում են ոչ միայն երկու մատյաններում օգտագործված գույներն ու դրանց երանգները, այլ՝ անգամ կարելի է երկու ձեռագրերի գունային գամմայի փոփոխությունը նկատել երկու ձեռագրերի տարբեր մասերում, որոնք որոշակիորեն տարբերվում են երկու ձեռագրերում: Չի բացառվում, որ միևնույն տարում նկարագրողված ձեռագիրն ու տպագիրը արվել են միաժամանակ, և եղբայրները պատրաստված ներկերը կիրառել են զուգահեռաբար երկուսի համար: Ժողովածուի 301բ-402բ էջերի վերը նշված գծանկարային ոճով արված զարդագրերի և լուսանցարդերի հանդիպում ենք նաև մագաղաթյա Ավետարանի էջերին: Հնարավոր է, որ երկու եղբայրներից մեկն ավելի վարժ տիրապետել է գծանկարին, և իր այս ունակությունները ներկայացրել միաժամանակ երկուսի մեջ էլ: Չի բացառվում, որ ժամանակի ընթացքում մեզ կհաջողվի գտնել Սեբաստացի եղբայրների վրձնին պատկանած այլ մատյաններ ևս, որովհետև իրենց կյանքի օրոք վերջիններս արդեն ձեռք էին բերել հայտնի նկարիչների անուն, ինչն ինքնին ենթադրում է, որ արել են զգալի աշխատանքներ, ցավոք՝ հանրությունը դեռ անձանոթ:

Այսպիսով, ՄՄ ձեռագրերի 10665 համարի ներքո գրանցված մագաղաթյա տպագիր Ավետարանը՝ տպագրումից մինչև նկարագրողում Բարսեղ և Հակոբ Սեբաստացի եղբայրների աշխատանքի արգասիքն է, ինչն ապացուցվում է միևնույն թվականի վերջիններիս տպարանում լույս տեսած Ավետարանի և ՄՄ 101 համարի Ժողովածուի նկարագրողումների համեմատությամբ, և Ժողովածուի հետ միասին մեզ են ներկայացնում Սեբաստացի եղբայրների մանրանկարչական գործունեության որոշ էջեր:

DAVIT GHAZARYAN

A UNIQUE PRINTING ON PARCHMENT (Ms M 10665)

Keywords: Barsegh and Hakob Sebastats‘i, Sebastats‘i printing house, printed Gospel, Constantinople, miniaturist brothers, printed and painted Gospel.

The collection of Matenadaran comprises not only manuscripts but also old-printed books, among which there is a notable Gospel, wholly printed except for its miniatures and a later colophon. When entering Matenadaran in 1974, it was placed in the manuscript depository and numbered № 10665. The Gospel is also unique for being printed on parchment. It has attracted specialists’ attention but they have not succeeded in finding out its date and the name of the printing-house.

We have been able to find the answers to these questions: the Gospel was printed in the printing-house of Barsegh and Hakob Sebastats‘i (in Constantinople) in 1740. Also, a more detailed study made it possible to identify the authors of illustrations: they are the same brothers Barsegh and Hakob who were famous painters in Constantinople. Among the manuscripts of Matenadaran, there is a Miscellany (M 101) which, according to the colophon, was illuminated by them.

ДАВИД КАЗАРЯН

УНИКАЛЬНОЕ ИЗДАНИЕ НА ПЕРГАМЕНЕ

(Рукопись № 10665 коллекции Матенадарана имени Маштоца)

Ключевые слова: Барсег и Акоп Себастици, Типография Себастици, печатное Евангелие, Константинополь, миниатюристы, печатное и раскрашенное Евангелие.

В коллекции Матенадарана наряду с рукописями хранятся также старопечатанные книги, среди которых особняком стоит одно Евангелие, полностью печатное, за исключением миниатюр и одного колофона. В 1974 году, при поступлении в Матенадаран, оно попало в рукописный фонд (№ 10665). Евангелие уникально еще и тем, что полностью напечатано на пергаменте. После поступления оно привлекло внимание ряда специалистов, которые так и не смогли выяснить дату издания и типографию.

Нам удалось найти ответы на эти вопросы: Евангелие напечатано в типографии Барсега и Акопа Себастици (Константинополь) в 1740 году. При более детальном изучении удалось также выяснить, что авторы иллюстраций – те же братья Барсег и Акоп, известные в Константинополе миниатюристы. Среди рукописей Матенадарана есть Сборник (№ 101), который, судя по колофону, иллюминировали те же братья.